



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ԼՈՐԵՑՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

*(գանգադ թիվ 21702/22)*

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

18 հունվարի 2024թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

**Լորեյյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),  
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović]՝ *Նախագահ,*

Անյա Չայբերտ Ֆոհ [Anja Seibert-Fohr],

Էն Լուիզ Բորման [Anne Louise Bormann]՝ *դատավորներ,*

եւ Վիկտորյա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի  
քարտուղարի տեղակալի պաշտոնակատար,*

2023 թվականի դեկտեմբերի 14-ին անցկացնելով դռնփակ  
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

**ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ**

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար  
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ  
հոդվածի համաձայն ընդդեմ Հայաստանի՝ 2022 թվականի ապրիլի 20-ին  
Դատարան ներկայացված գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Առինջ գյուղում գործող իրավաբան պրն  
Լ. Սահակյանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Կառավարություն)  
ծանուցվել է գանգատի մասին:

ՓԱՍՏԵՐԸ

4. Դիմումատուի՝ գանգատի համար նշանակություն ունեցող տվյալները եւ տեղեկությունները ներկայացված են կից աղյուսակում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

5. Դիմումատուն բողոք է ներկայացրել հիմնականում առ այն, որ իր մինչդատական կալանքի ժամկետն անհիմն երկար է եղել: Նրա բողոքը ենթակա է քննության Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն:

6. Դատարանը նկատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքի կամ մինչեւ դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքի վերաբերյալ ընդհանուր սկզբունքները նշվել են իր մի շարք վճիռներում (տե՛ս, ի թիվս շատ այլ վճիռների, Կուդլան ընդդեմ Լեհաստանի [ՄՊ] [*Kudła v. Poland [GC]*], թիվ 30210/96, § 110, ՄԻԵԴ 2000-XI, եւ Մքթեյն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [*McKay v. the United Kingdom [GC]*], թիվ 543/03, §§ 41-44, ՄԻԵԴ 2006-X):

7. Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի թիվ 629/11, §§ 48 եւ հաջորդող պարբերություններ, 2016 թվականի հոկտեմբերի 20, եւ Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի թիվ 12895/06, 2012 թվականի հունիսի 5-ի նախադեպային գործերով Դատարանն արդեն իսկ գտել է, որ տեղի է ունեցել խախտում սույն գործում առկա հարցերին նմանատիպ հարցերի առնչությամբ:

8. Դատարանը, ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը, չի հայտնաբերել սույն բողոքների ընդունելիության կամ էության վերաբերյալ այլ եզրակացության հանգելու համար որեւէ համոզիչ փաստ կամ փաստարկ: Հաշվի առնելով թեմայի վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը

համարում է, որ ներկայիս գործում դիմումատուի մինչդատական կալանքի տեսողությունը չափազանց երկար եւ անհիմն է եղել:

9. Հետեաբար սույն բողոքներն ընդունելի են եւ բացահայտում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

10. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը (տե՛ս մասնավորապես վերելում հիշատակված՝ *Արա Հարությունյանի* գործը, § 66), ողջամիտ է համարում շնորհել կից աղյուսակում նշված գումարները:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Հայտարարում է բողոքը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ընդունելի:

2. Վճռում է, որ սույն բողոքներով բացահայտվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ մինչդատական կալանքի չափազանց երկար տեսողության առնչությամբ:

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի կից ներկայացված աղյուսակում նշված գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական

Կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2024 թվականի հունվարի 18-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Վիկտորյա Մարադուդինա՝

Քարտուղարի տեղակալի  
պաշտոնակատար

Ֆարիս Վեհաբովիչ՝

Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքներ պարունակող գանգատ (կալանավորման համար հիմնավոր եւ բավարար պատճառների բացակայությունը)

Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Կալանավորման ժամկետը	Դատարանը, որը կայացրել է կալանավորման մասին որոշումը/քննել է բողոքը	Հատուկ թերությունները	Դիմումատուներից յուրաքանչյուրին ոչ նյութական վնասի դիմաց շնորհվող գումարը (եվրոյով) <sup>1</sup>	Յուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի դիմաց շնորհվող գումարը (եվրոյով) <sup>2</sup>
21702/ 22 20 ապրիլի 2022թ	<b>Գեորգ ԼՈՐԵՑՅԱՆ</b> 1994	Սահակյան Լեւոն Առինջ գյուղ	4 դեկտեմբերի 2019թ. - 19 հոկտեմբերի 2022թ.	Երեւանի ընդհանուր իրավասության դատարան Վերաքննիչ քրեական դատարան	դատարանների կողմից բերված պատճառների ոչ կայուն բնույթը վարույթը պատշաճ կերպով չիրականացնելը, որը հանգեցրել է նախնական կալանքի չափից երկար տեւողության	2,000	250

<sup>1</sup> Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

<sup>2</sup> Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ: